

Տիգրան Ռ. Եփրեմյան

ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԳԻԾԸ*

Վեստֆալյան խաղաղությունից մինչև Արցախյան
հիմնահարց*

Բանալի բառեր – ազգերի ինքնորոշում, տարածքային ամբողջականություն, ինքնիշխանություն, Հուգո Գրոտիուս, Վեստֆալ, Ուտրեխտ, Ֆրանսիական մեծ հեղափոխություն, Ազգերի լիգա, ՄԱԿ, Հելսինկիի եզրափակիչ ակտ, Եվրոպա, Արցախի Հանրապետություն:

Մուտք

Արդի աշխարհակարգի ձևավորումը մեկնարկել է հարդյունս 1648 թ. Վեստֆալյան պայմանագրերի, որոնցով շահագրգիռ պետությունները կնքեցին ոչ թե հերթական խաղաղությունը, այլ մշակեցին համակեցույթային նորմերի և հարաբերությունների նոր հարացույց ու համակարգ հիմնված երեք հիմնական սկզբունքների վրա՝ պետական ինքնիշխանության սկզբունք, ինքնիշխան պետությունների իրավահավասարություն և ինքնիշխան պետությունների ներքին գործերին չմիջամտելու պարտավորություն: Վեստֆալյան պայմանագրերով ինքնիշխան պետությունները դարձան եվրոպական քաղաքական համակարգի հիմնական միավորները¹: Քաղաքականության և կրոնի տարանջատումն ու քաղաքական ինքնորոշման գաղափարն ի վերջո հանգեցրին միջազգային հանրության իրավահավասար անդամների խաղաղ գոյակցության սկզբունքին, որն իր հիմնարար արտահայտությունը գտավ 1975 թ. Հելսինկիի եզրափակիչ ակտում:

Ներկա աշխատանքում փորձ է արվելու ներկայացնել քաղաքական ինքնորոշման գաղափարի և ազգերի ինքնորոշման իրավունքի ձևակերպման ու կիրարկման պատմությունը Վեստֆալյան պայմանագրերից մինչև Հելսինկիի եզրափակիչ ակտը: Այնուհետև վերոշարադրյալի լայնա-

ՎԷՄ համահայկական հանդես Ը (ԺԳ) փաթեթ, թիվ 4 (56), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2016

*Հոդվածն ընդունվել է տպագրության 21.10.2016:
1 Տե՛ս **Rosenau J. N.** and **Czempiel E.-O.** (ed.), *Governance without government: order and change in world politics.* Cambridge, New York: Cambridge University Press, 2003, p. 59.

կի համատեքստում ներկայացվելու է Արցախի Հանրապետության ինքնորոշման իրավունքը:

1. Ինքնորոշման գաղափարը Եվրոպայում արդի դարաշրջանի վաղորդայնին

Քաղաքական համայնքների ինքնորոշման գաղափարի զարգացման ելակետ կարելի է համարել 1648 թ. Վեստֆալյան խաղաղությունը: Երեսնամյա պատերազմի ընթացքում ինքնորոշման և ինքնիշխան պետականաշինության առումով կարող ենք առանձնացնել Նիդերլանդների, Շվեյցարիայի և Բոհեմիայի օրինակները: Մասնավորապես, 1618 թ. մայիսի 23-ին Պրահայի ամրոցի պատուհանից Սրբազան հռոմեական կայսրության ներկայացուցիչների դեֆենեստրացիան (լատիներենից՝ *de-fenestra* - պատուհանից դուրս նետում)² դարձավ Բոհեմիական ինքնիշխանության հաստատման փաստացի և պաշտոնական խորհրդանիշը, որը մինչ այդ դրսևորվում էր միայն քվազիպետական մակարդակում: Կայսրությունից առանձնացավ և իբրև ինքնիշխան պետություն ձևավորվեց Շվեյցարական Համադաշնությունը: Ինչպես շվեյցարական կանտոններն էին հաստատել Հելվետական Համադաշնությունը (*Confoederatio Helvetica*), այնպես էլ Բոհեմիայի, Մորավիայի, Սիլեզիայի և Վերին ու Ստորին Լուսատիանների իշխանությունները հիմնեցին Բոհեմիական Համադաշնությունը (*Confoederatio Bohemica*): Համանման գործընթացների արդյունքում էր ձևավորվել նաև Նիդերլանդների միացյալ պրովինցիաների հանրապետությունը: 1620 թ. բոհեմիական ապստամբությունը, որը բորբոքել էր Երեսնամյա պատերազմը, ճնշվեց և բոհեմիական պետականաշինությունը ձախողվեց: Երեսնամյա պատերազմի ավարտին 1648 թ. Վեստֆալյան խաղաղությամբ իրավաբանորեն ճանաչվեցին միայն Նիդերլանդների և Շվեյցարիայի ինքնիշխանության իրավունքները³: Մեր դիտարկմամբ՝ որոշակի վերապահումներով այս ակտերը կարելի է համարել ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչման նախօրինակներ:

Վեստֆալյան կարգավորումներով հիմնարար կերպով վերանայվեց 1555 թ. Աուգսբուրգի հաշտության պայմանագրի «ուս տարածքը, նրա դա-

2 1618 թ. մայիսի 23-ին Բոհեմիայի բողոքական իշխանների խորհուրդի մասնակիցները կոմս Տուրնի գլխավորությամբ Պրահայի դոյակի թագավորական խորհրդի նիստերի դահլիճի պատուհանից՝ շուրջ 21 մետր բարձրությունից, դուրս նետեցին Սրբազան հռոմեական կայսրության և Բոհեմիայի թագավոր Ֆերդինանդ Շոթրիացու կաթոլիկ ներկայացուցիչներ կոմս Վիլեմ Սլավատային, կոմս Յարոսլավ Բորգիտային ու նրանց քարտուղար Ֆիլիպ Ֆաբրիցիուսին: Վերջիններս հրաշքով փրկվեցին և կարողացան իրենց ոտքով փախչել: Կաթոլիկ եկեղեցին նրանց փրկությանը համարեց Աստվածային օգնություն նրանց արդար գործում: Այս պատմական իրադարձությունը հայտնի է որպես Պրահայի 1618 թ. կամ երկրորդ դեֆենեստրացիա (*Second Defenestration of Prague*), որը դարձավ բոհեմիական ապստամբության սկիզբը և բորբոքեց Երեսնամյա պատերազմը: Տե՛ս **Mortimer G.**, *The Origins of the Thirty Years War and the Revolt in Bohemia, 1618*. London: Palgrave Macmillan, 2015, pp. 118-176. Տե՛ս նաև **Wilson P. H.**, *The Thirty Years War: A Sourcebook*. London and New York: Palgrave Macmillan, 2010, pp. 33-38; **Wilson Ch.**, *The Transformation of Europe, 1558-1648*. Berkeley and Los Angeles: University of California Press, 1976, p. 247.

3 Տե՛ս **Burkhardt J.**, “The Thirty Years’ War”, In *A Companion to the Reformation World*, Edited by R. Po-chia Hsia, 272-290, Blackwell companions to European history, Melbourne: Blackwell Publishing, 2004, pp. 277-278.

վանանքը» (*cuius regio, eius religio*)⁴ դրույթը և կրոնական հարցերի նկատմամբ ինքնիշխանությունը հանվեց տիրակալների հայեցողությունից: Սրբազան հռոմեական կայսրության համար Վեստֆալի պայմանագիրը աշխարհիկ, պրոտո-լիբերալ (*proto-liberal*) սահմանադրություն էր⁵: Այստեղ դրսևորվեց կրոնական ինքնորոշման գաղափարը: Մեր համոզմամբ Վեստֆալյան խաղաղությամբ կրոնական համայնքների և Նիդերլանդների ու Շվեյցարիայի օրինակներով քաղաքական համայնքների ինքնորոշման իրավունքների ճանաչման ակտերը հիմնարար նշանակություն ունեցան քաղաքական ինքնորոշման գաղափարի զարգացման համար:

Մինչև Ֆրանսիական հեղափոխությունը Վեստֆալյան խաղաղությունը համարվում էր եվրոպական պետությունների համակարգի հիմքը: Երկու պետությունների՝ Նիդերլանդների Հանրապետության և Շվեյցարական Համադաշնության անկախության ճանաչումը ամրապնդեց այն համոզմունքը և պատասխանատվությունը, որ միայն համաեվրոպական վեհաժողովը կարող է վավերացնել պետությունների ստեղծումը կամ վերացումը⁶:

Փաստացի Վեստֆալյան կարգավորումները չվերացրեցին եվրոպական համակարգի ենթակարգային բնույթը, քանզի նրա հիմնական գաղափարը խաղաղությունն էր և ոչ թե պետությունների ինքնորոշումը: Վեստֆալյան խաղաղությունից հետո եվրոպայում դրսևորվեցին ինչպես պետությունների իրավահավասար համակեցության սկզբունքը, այնպես էլ դրա հաղթահարման փորձերը: Ամենանշանավորը թերևս Ֆրանսիայի արքա Լուի 14-րդի փորձն էր, որն ավարտվեց «Իսպանական ժառանգության համար» (1701-1714 թթ.) պատերազմով⁷: Այս պատերազմը և այն եզրափակած Ուտրեխտի 1713 թ. պայմանագիրը պետությունների եվրոպական համակարգի կայացման կարևոր հանգրվան հանդիսացան: Պատերազմի առիթը 1700 թ. Իսպանիայի վերջին Հաբսբուրգ թագավորի՝ անժառանգ Կառլոս 2-րդի մահն էր: Իսպանական գահի ժառանգության հարցով շահագրգռված էին եվրոպական մի շարք արքայատներ, քանզի Իսպանիան տիրապետում էր նաև ժամանակի ամենաընդարձակ գաղութային կայսրությանը⁸: Կառլոս 2-րդը Իսպանիայի գահը կտակել էր Ֆրանսիայի արքա

4 Տե՛ս **Parker G.** (ed.), *The Thirty Years' War*, Second edition. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2006, p. 157.

5 Տե՛ս **Straumann B.**, *The Peace of Westphalia as a Secular Constitution*. *Constellations*, Volume 15, Number 2, (Blackwell Publishing Ltd., 2008), pp. 173-188.

6 Տե՛ս **Cooper J. P.** (ed.), *The Decline of Spain and the Thirty Years War 1609-48/59: The New Cambridge Modern History Volume IV*. Cambridge: Cambridge University Press, 1970, p. 358.

7 Տե՛ս **Kennedy P. M.**, *The Rise and Fall of the Great Powers: Economic Change and Military Conflict from 1500 to 2000*. London, Sydney and Wellington: Unwin Hyman, 1988, p. 88. Տե՛ս **McKay D.** and **Scott H. M.**, *The Rise of the Great Powers 1648-1815*, 2nd edition. London and New York: Routledge Taylor & Francis Group, 2014, pp. 20-35. Տե՛ս Bromley J. S. (ed.), *The New Cambridge Modern History Volume VI: The Rise Of Great Britain And Russia 1688-1715/25*. Cambridge: Cambridge University Press, 1971, pp. 201-220, 223-253. Տե՛ս **Зонова Т. В.**, *Духовные основы и идеологические постулаты российской дипломатии / под ред. А. Чубарьяна // Религия и политика в XX веке. - М., 2006, с. 263-265. Տե՛ս Burkhardt J.*, *Wars of States or Wars of State-Formation? Olaf Asbach and Peter Schröder (ed.), War, the State, and International Law in Seventeenth-Century Europe*. Farnham, Burlington: Ashgate Publishing, 2010), p. 27. Տե՛ս **Anderson P. R.**, *Lineages of the Absolutist State*. London, New York: New Left Books, 1974, pp. 397-400.

8 Տե՛ս **Lesaffer R.**, *The Peace of Utrecht, the Balance of Power and the Law of Nations*. Tilburg Law School Legal Studies Research Paper Series, No. 05/2014, pp. 4-5.

Լուի 14-րդի թոռ, Անժոյի դուքս Ֆիլիպին, ինչը մեծ առավելություն էր ընդեռում Բուրբոնների արքայատանը և Լուի 14-րդին անձամբ: Բացի դրանից՝ Լուի 14-րդը հրաժարվեց հեռացնել Ֆիլիպին ֆրանսիական գահի ժառանգության իրավունքից՝ հնարավոր դարձնելով Ֆրանսիայի և Իսպանիայի ապագա միավորումը մեկ միապետի իշխանության ներքո⁹: Այս հանգամանքը Անգլիան, Նիդեռլանդները, Ավստրիան, Պրուսիան, Պորտուգալիան և այլ եվրոպական պետությունները ընկալեցին իբրև սպառնալիք «եվրոպական հավասարակշռությանը» և ձևավորեցին իրենց «մեծ դաշինքը» (Աուգսբուրգյան լիգան) ընդդեմ Լուի 14-րդի¹⁰: «Իսպանական ժառանգության համար» համաեվրոպական պատերազմի արդյունքում Եվրոպայում համընդհանրական միապետության հաստատման Լուի 14-րդի նկրտումները ձախողվեցին¹¹: Պատերազմն ավարտվեց Ուտրեխտի (1713 թ.), Ռաշտատի (1714 թ.) և Բադենի (1714 թ.) հաշտության պայմանագրերով: Ֆիլիպ 5-րդը (1700–1746 թթ.) ճանաչվեց Իսպանիայի թագավոր, սակայն առանց ֆրանսիական գահը ժառանգելու իրավունքի: Ուտրեխտյան խաղաղությամբ պահպանվեց եվրոպական հավասարակշռությունը և մշակվեց վերջինիս պաշտպանության ճկուն մեխանիզմ. այսուհետ որևէ տերության կողմից «եվրոպական հավասարակշռությանը» նետված մարտահրավերը պետք է պատասխան ստանար նոր դաշինքների կողմից¹²:

1713 թ. մարտ–ապրիլ ամիսներին կնքված Ուտրեխտյան պայմանագրերով¹³ ուժերի հավասարակշռության սկզբունքը դարձավ ճանաչված նորմ¹⁴: Ի տարբերություն Վեստֆալյան խաղաղության՝ այստեղ հիմնական գաղափարը **պետությունների ինքնորոշման իրավունքն** էր, ոչ թե խաղաղությունը: Քանզի Եվրոպայում գերիշխանության հասնելու Ֆրանսիայի փորձերը սպառնում էին խախտել Վեստֆալյան խաղաղությամբ հաստատված ինքնիշխան պետությունների օրինական համակարգը¹⁵:

Մեր ձևակերպած **պետությունների ինքնորոշման իրավունք** հասկացության ամրագրման համար կիրարկելի է գերմանացի նշանավոր իմաստասեր Իմանուիլ Կանտի (1724–1804 թթ.) մշակած պետությունների միջև հավերժական խաղաղության մասին պայմանագրի նախագծի հետևյալ դրույթը. «Ժառանգական միապետությունը չի նշանակում պետություն, որը կարող է ժառանգվել այլ պետության կողմից, միայն պետությունը կառավարելու իրավունքը կարող է ժառանգությամբ փոխանցվել այլ ֆիզիկական անձի: Պետությունն է ձեռք բերում կառավարիչ, այլ ոչ թե անձն է (ով տիրում է այլ պետության) ձեռք բերում տվյալ պետությունը: Քանզի հանրահայտ է, թե վերջին ժամանակներում ինչպիսի վտանգ է Եվրոպայի

9 Տե՛ս **Bromley J. S.** (ed.), նշվ. աշխ., էջեր 384–398:

10 Տե՛ս **Kennedy P. M.**, նշվ. աշխ., էջ 104:

11 Տե՛ս **Bromley J. S.** (ed.), նշվ. աշխ., էջեր 410–445:

12 Տե՛ս **Bromley J. S.** (ed.), նշվ. աշխ., էջեր 446–479:

13 Տե՛ս **Lesaffer R.**, նշվ. աշխ., էջեր 1–2: Ուտրեխտի պայմանագիր եզրույթը հավաքական անվանումն է 1713 թ. Ուտրեխտում կնքված մի շարք անջատ երկկողմ հաշտության պայմանագրերի, որոնք եզրափակեցին «Իսպանական ժառանգության համար» պատերազմը:

14 Տե՛ս **Teschke B.**, *The Myth of 1648: Class, Geopolitics, and the Making of Modern International Relations*. London and New York: Verso, 2003, p. 233.

15 Տե՛ս **Watson A.**, *Systems of States*. *Review of International Studies*, Volume 16/Issue 02, April 1990, pp. 106–107.

համար ստեղծում այն հանգամանքը, որ անգամ պետությունները կարող են ամուսնանալ, ինչը դիտվում է իբրև առանց ավելորդ ջանքերի սեփական հզորությունը ավելացնելու կամ տիրույթները ընդարձակելու նոր միջոց»¹⁶:

Եվրոպայում հավասարակշռության պահպանման գաղափարը ընդունվեց որպես եվրոպական համակարգի անդամ պետությունների¹⁷ ընդհանուր նպատակ և «քրիստոնեական աշխարհի հանրային կամքի» դրսևորում: Սա արտահայտվեց 1713 թ. Ուտրեխտի պայմանագրի պրեամբուլայում¹⁸ Լուի 14-րդի գերիշխանական հավակնությունները զսպելու համար համախմբված հակաֆրանսիական դաշինքի անդամ պետությունների կողմից¹⁹:

Արդի դարաշրջանի սկզբում՝ մինչև Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, ինքնիշխան պետությունները հիմնված էին դինաստիական օրինականության սկզբունքների վրա, այնուհետև այն աստիճանաբար սկսեց փոխարինվել օրինականության ժողովրդական կամ ազգային սկզբունքներով²⁰: Ուստի կարող ենք եզրակացնել, որ Վեստֆալյան համակարգի կերտողները ինքնիշխանության սկզբունքի միջոցով ոչ միայն դրեցին նոր միջազգային համակարգի հիմքերը, այլև նրա հետագա զարգացման և կերպափոխման հնարավորություն ստեղծեցին:

2. Ինքնորոշման գաղափարի ակունքները եվրոպական քաղաքական իմաստասիրության մեջ

Ժողովրդական ինքնիշխանության Հուգո Գրոտիուսի (1583–1645 թթ.) գաղափարները նվազ չափով են ուսումնասիրված: Մեր համոզմամբ՝ մարդու բնական և ընկերային իրավունքների, ազգերի ինքնիշխանության իրավունքի, ինքնիշխանության բաժանելիության, իշխանությունների տարանջատման և հասարակական դաշինքի վերաբերյալ գաղափարները հենց Գրոտիուսի փոխանցմամբ մեծապես ներազդեցին լուսավորական մտքի վրա:

16 **Kant I.** (1795), *Toward Perpetual Peace and Other Writings on Politics, Peace, and History*. Edited and with an introduction by Pauline Kleingeld; translated by David L. Colclasure. New Haven and London: Yale University Press, 2006, pp. 67–68.

17 Մեծ Բրիտանիան, Ուտրեխտի պայմանագրով ստանալով Զիբրալթարը և Մինորկա կղզին, հրաժարվեց մայրցամաքային Եվրոպայում տարածքային պահանջներից և պատրաստակամություն ու կարողություն ցուցաբերեց կարգավորելու եվրոպական հարաբերությունները «ակտիվ հավասարակշռման» իր նոր քաղաքականությամբ: Տե՛ս **Teschke B.**, նշվ. աշխ., էջ 259: Տե՛ս **Bromley J. S.** (ed.), նշվ. աշխ., էջեր 275–276:

18 Տե՛ս *A Collection of Treaties between Great Britain and Other Powers*. Edited by **Chalmers G.**, London: J. Stockdale, 1790, pp. 340–342.

19 Տե՛ս **Bull H.** (1977), *The Anarchical Society: A Study of Order in World Politics*, 3rd edition (New York: PALGRAVE, 2002), p. 102: Հստակեցնելով նշենք, որ Ուտրեխտում ստորագրված մի շարք երկկողմ հաշտության պայմանագրերից միայն երկուսում կար ուղղակի հղում «ուժերի հավասարակշռություն» սկզբունքին՝ Իսպանիայի և Մեծ Բրիտանիայի միջև կնքված պայմանագրում, ինչպես նաև Իսպանիայի ու Սավոյայի միջև պայմանագրում: Տե՛ս **Lesaffer R.**, նշվ. աշխ., էջեր 2–3:

20 Տե՛ս **Bull H.**, նշվ. աշխ., էջ 8: Տե՛ս **Rowen H. H.**, *The Peace of Westphalia Revisited*, “The Journal of Modern History” Vol. 33, No. 1 (The University of Chicago Press, Mar., 1961), p. 54: Տե՛ս **Hassan D.**, *The Rise of the Territorial State and the Treaty of Westphalia*. Yearbook of New Zealand Jurisprudence, ed. **Gay Morgan**. Vol. 9, 2006, pp. 62–70.

Գրոտիուսի աշխատությունները նշանավորում են ինքնիշխանության արդի հասկացողության սկիզբը և միջնադարյան ըմբռնումների ավարտը: Գրոտիուսը մտահոգված էր այս խնդիրներով, քանզի ցանկանում էր հիմնավորել 1568–1648 թթ. Նիդերլանդական հեղափոխությունը և հոլանդացիների պայքարը իսպանական գահի տիրապետության դեմ²¹, որը ունահարել էր հոլանդացի ժողովրդի «հնագույն իրավունքներն ու արտոնությունները» (“ancient rights and privileges”): Այս մտավոր ձիգի արդյունքը դարձավ ինքնիշխանության նոր հղացքը, ըստ որի՝ քաղաքական համայնքում կենտրոնական տեղ էին զբաղեցնում ժողովուրդների իրավունքները: Այս նոր մոտեցումը պետք է փոխարիներ համայնքի առաջ տիրակալի բարոյական պատասխանատվության միջնադարյան ըմբռնմանը: Իբրև քաղաքական հղացք այս մոտեցումը մարմնավորում ստացավ Վեստֆալյան խաղաղությանը, իսկ հետագայում դարձավ նորմատիվային, նախ Եվրոպայում, ապա նաև աշխարհում²²:

Գրոտիուսը հանդես է գալիս բնական իրավունքի իր ուրույն մեկնաբանությամբ. «բնական իրավունքը ճշմարիտ բանականության թելադրանքն է»²³: Հետևաբար բնական իրավունքի մայրը մարդկային բնությունն է²⁴: Ինչպես Գրոտիուսն էր սահմանում, ազգը՝ իբրև «ազատ մարդկանց կատարյալ հասարակություն», ինքնիշխանության իրավունք ունի: Իսկ «պետությունը ազատ մարդկանց կատարյալ մարմին է (perfect body of free men), միավորված միասին վայելելու ընդհանուր իրավունքներն ու առավելությունները»²⁵: Ըստ Գրոտիուսի պետությունը կամ ազգը կարող է ունենալ ինքնիշխանության իրավունք, եթե անգամ այն ճանաչված չէ այլ պետությունների կողմից²⁶:

Լուսավորական շարժման ներկայացուցիչները հիմնավորեցին քաղաքական ազատության գաղափարը: Ազատականության տեսության հիմնա-

21 Դեռևս 1610 թ. հրատարակվել էր Հուգո Գրոտիուսի «Բատավիական Հանրապետության հնությունը» (*De Antiquitate Reipublicae Batavicae*) աշխատությունը, որտեղ հեղինակը պաշտպանում էր Նիդերլանդների հանրապետության ինքնիշխանության իրավունքը և հոլանդացիների պայքարն անկախության համար: Այստեղ Գրոտիուսը ներկայացնում էր Հոլանդիայի պատմությունը սկսած հռոմեական ժամանակներից՝ ցույց տալով, որ հոլանդացիները և բատավիացիները պատմականորեն քաղաքականապես ինքնիշխան և անկախ են եղել, և որ իրենց կառավարման կերպը մշտապես եղել է արիստոկրատական, քան միապետական: Այս կերպ Գրոտիուսն օգտագործում էր պատմական հետախորքն իր քաղաքական տեսակետները հիմնավորելու նպատակով: Տե՛ս **Grotius H.** (1610), *The Antiquity of the Batavian Republic. With the notes by Petrus Scriverius*. Ed. & transl. by Jan Waszink et al. Assen: Van Gorcum, 2000. Տե՛ս **Waszink J.**, “Tacitism in Holland: Hugo Grotius’ *Annales et Historiae de rebus Belgicis*” in Rhoda Schnur (ed.), *Acta Conventus Neo-Latini Bonnensis: Proceedings of the 12th International Congress of Neo-Latin Studies (Bonn 2003)*. Medieval & Renaissance Texts & Studies, vol. 315, 2006.

22 Տե՛ս **Johnson J. T.**, “Grotius and His Impact: The Westphalian Settlement, the Idea of the “law of Nations,” and the Emergence of the Territorial Idea of Sovereignty”. *Sovereignty: Moral and Historical Perspectives*. Washington: Georgetown University Press, 2014, p. 82.

23 **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace, Including The Law of Nature and of Nations*. Translated from the original Latin of Grotius with notes and illustrations by A. C. Campbell, with an introduction by **David J. Hill**, Adamant Media Corporation, Elibron Classics, 2005 (This Elibron Classics Replica Edition is an unabridged facsimile of the edition – Washington & London: M. Walter Dunne, 1901), p. 21. Տե՛ս **Tuck R.**, *Natural Rights Theories: Their Origin and Development*. Cambridge and New York: Cambridge University Press, 1981, pp. 58–81.

24 Տե՛ս **Чубарьян А. О.**, *Европейская идея в истории. Проблемы войны и мира*. – М.: Междунар. отношения, 1987, с. 95.

25 **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, p. 25.

26 Տե՛ս **Wendt A.**, *Social Theory of International Politics*. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 1999, p. 208.

դիրներից Ջոն Լոկը (1632–1704 թթ.) Գրոտիուսի նման պնդում էր, որ քաղաքական իշխանության և ինքնիշխանության իրավունքների ակունքը բնական իրավունքն է: Ըստ Լոկի՝ բնական վիճակը (state of nature) կատարյալ ազատության և հավասարության իրավիճակ է, որը չի նշանակում ամենաթողություն: Քանզի նույնիսկ բնական վիճակն ունի իր օրենքները ղեկավարվելու համար՝ «բնության օրենքը (Law of Nature), որը պարտավորեցնում է բոլորին» և սովորեցնում իրեն ապավինած ողջ մարդկությանը լինել հավասար ու ազատ, և «**ոչ ոք չպետք է վնաս հասցնի ուրիշի կյանքին, առողջությանը, ազատությանը կամ սեփականությանը**» (“life, health, liberty, or possessions”)²⁷: Հետագայում անօտարելի իրավունքները խորհրդանշող այս ձևակերպումը պետք է իր արտահայտությունը գտներ 1776 թ. հուլիսի 4-ին ԱՄՆ-ի անկախության հռչակագրում «**կյանք, ազատություն և երջանկության ձգտում**» (“Life, Liberty and the pursuit of Happiness”)²⁸ տարբերակով:

Լոկը գտնում էր, որ բնական իրավունքները միայն բավական չեն մարդկային համակեցական կյանքը կազմակերպելու համար: Ուստի մարդիկ իրենց ընդհանուր կամքով ձևավորում են քաղաքական հասարակություն (political society), միավորվում են քաղաքացիական հասարակության (civil society) մեջ, նրանցից յուրաքանչյուրը հանուն հանրային բարիքի համայնքին է հանձնում իր բնական իրավունքների մի մասը, հաստատում ընդհանուր օրենքներ և ձևավորում իշխանություն: Հետևաբար, ըստ հեղինակի, օրենսդիր և գործադիր իշխանության (legislative and executive power) ակունքը քաղաքական կամ քաղաքացիական (political, or civil society) հասարակությունն է: Այս կերպ է ստեղծվում հանրապետությունը (commonwealth)²⁹:

Ֆրանսիացի լուսավորական Շառլ Լուի Մոնտեսքյոն (1689–1755 թթ.) իր «Օրենքների ոգին» նշանավոր աշխատության մեջ ձևակերպում է ազատության և անկախության տարբերությունները: Ըստ Մոնտեսքյոյի՝ պետության օրենսդրությունը պետք է հետևի «ազգի ոգուն» և չպետք է հակասի կառավարման սկզբունքներին³⁰:

Ժան Ժակ Ռուսսոն (1712–1778 թթ.) իր «Հասարակական դաշինք» (1762 թ.) աշխատությամբ ստեղծեց հասարակական դաշինքի համապարփակ տեսություն և հստակ իմաստասիրական–իրավական համակարգ, որը հետագայում պետք է օրինակ հանդիսանար արդի աշխարհի սահմանադրական պետությունների համար: Հանրային դաշինքի տեսության Ռուսսոյի տեսլականը արտահայտում էր մարդու և քաղաքացու քաղաքական իրավունքները հիմնված ժողովրդական ինքնիշխանության բացարձակության վրա: Ժողովուրդն իբրև բարձրագույն իշխանության կրող կառավարության հետ կնքում է հասարակական դաշինք, ինչի հետևանքով էլ ստեղծ-

27 **Locke J.** Two Treatises of Government. Edited by Thomas Hollis. London: A. Millar et al., 1764, pp. 195–198.

28 The Text of the Declaration of Independence, Philadelphia: July 4, 1776. A Century of Lawmaking for a New Nation: U.S. Congressional Documents and Debates, 1774 – 1875, Journals of the Continental Congress, Volume 5, pp. 510–515.

29 Տե՛ս **Locke J.**, նշվ. աշխ., էջեր 267–272:

30 Տե՛ս **Montesquieu Ch. S.** (1748), The Spirit of Laws. Translated by Thomas Nugent (1752). Kitchener: Batoche Books, 2001, pp. 171–201, 321–344:

վում է պետությունը: Ընդ որում, երբ իշխանությունը խախտում է հասարակական դաշինքը, ժողովուրդն իրավունք ունի ընդվզել և փոխել պետության ղեկավարությանն իր ընդհանուր կամքով³¹:

Բացարձակապետության ֆեոդալական հիմքերի քայքայումից հետո՝ Ֆրանսիական մեծ հեղափոխության շրջանում առաջ եկավ ազգային ինքնության և հավատարմության նոր հարացույցը: 1789 թ. օգոստոսի 26-ին «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» (“Déclaration des Droits de l’Homme et du Citoyen”)³² ընդունումը «շրջադարձային հանգրվան դարձավ ազատության պատմության մեջ, հիմնարար ուղենիշ՝ Եվրոպական քաղաքակրթության զարգացման համար»³³: Հռչակագրում ասվում էր, որ ֆրանսիացի ժողովրդի ներկայացուցիչները կազմակերպված իբրև Ազգային ժողով (Assemblée Nationale) ձանաչում և հռչակում են.

ա. «Մարդիկ ծնվում և մնում են ազատ ու իրավահավասար: Ընկերային տարբերությունները կարող են հիմնվել միայն ընդհանուր բարիքի նկատառումների վրա:

բ. **Ֆուրաքանչյուր քաղաքական ընկերակցության նպատակն է մարդու բնական և անբաժան իրավունքների պահպանումը: Այս իրավունքներն են ազատությունը, սեփականությունը, անվտանգությունը և դիմադրությունն ընդդեմ բռնատիրության:**

գ. **Ամենայն ինքնիշխանության սկզբունքի ակունքն ազգն է: Ոչ մի կորպորատիվ մարմին, ոչ էլ անհատ չի կարող իրականացնել որևէ իշխանություն, որն ուղղակիորեն չի բխում նրանից»³⁴:**

Եվրոպայում քաղաքական և սոցիալական ուժերի նոր հարաբերակցության պայմաններում ձևավորվեցին նոր հեղափոխական հաստատություններ, սկզբունքներ ու հարաբերությունների նորմեր: Հասկապես կենտրոնական նշանակություն ունեցան ազգային ինքնիշխանության սկզբունքի, հանրապետության և հանրապետական կառավարչաձևի հիմնավորումները: Հենվելով այս հիմնարար դրույթների վրա՝ Ֆրանսիական մեծ հեղափոխության գաղափարախոսները փորձեցին ձևակերպել նաև միջազգային հարաբերությունների նոր օրենքներ և սկզբունքներ: Ֆրանսիական մեծ հեղափոխության առավել հետևողական գաղափարախոսները (մասնավորապես Ժիրոնդիստները) հեղափոխությունը դիտարկում էին իբրև ելակետ Եվրոպայի կերպափոխման համար³⁵:

31 Տե՛ս **Rousseau J. J.** (1762), *On the Social Contract*. Translated by G. D. H. Cole. New York: Dover Publications, 2003, pp. 9–11.

32 Հռչակագիրը բաղկացած է պրեամբուլայից և 17 հոդվածներից:

33 **Braudel F.**, *A History of Civilisations*. Translated by Richard Mayne. New York, London, Auckland: The Penguin Press, 1994, p. 329.

34 Déclaration des Droits de l’Homme et du Citoyen de 1789, Conseil Constitutionnel de la République Française, Site officiel URL: <http://www.conseil-constitutionnel.fr/conseil-constitutionnel/francais/la-constitution/la-constitution-du-4-octobre-1958/declaration-des-droits-de-l-homme-et-du-citoyen-de-1789.5076.html> (02.03.2016).

35 Տե՛ս **Чубарьян А. О.** *Европейская идея в истории. Проблемы войны и мира.* – М.: Междунар. отношения, 1987, с. 146–154. Ֆրանսիական մեծ հեղափոխության առաջադիմական գաղափարները իրենց արտահայտությունը գտան նաև 1791 թ. և 1793 թ. ընդունված սահմանադրություններում: 1793 թ. ապրիլի 24-ին Ռոբեսպիերի նախաձեռնությամբ Կոնվենտի կողմից հաստատվեց իրավունքների հռչակագիր, որում խոսվում էր նաև հեղափոխական Ֆրանսիայի միջազգային քաղաքականության իրավական սկզբունքների մասին. «Առաջին, բոլոր պետությունների մարդիկ եղբայրներ են և հնարավորության սահմաններում տարբեր ժողովուրդները պետք է օգնեն միմյանց

Հեղափոխական Ֆրանսիայի արտաքին դիվանագիտական նկրտումները ևս ձևակերպվեցին «մեծահոգության» դիրքերից. «ազգ, որը չունի այլ տարածքային հավակնություններ, քան իր «քնական սահմաններն» (*limites naturelles*) են, մտադիր է ամենուր հետամուտ լինել **«Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի»** (*«droit des peuples à disposer d'eux-mêmes»*) իրականացմանը»³⁶: Հեղափոխական և հանրապետական գաղափարաբանությունից անդին այս մոտեցումներն իրենց հստակ ձևակերպումը և կիրարկումը գտան նաև նապոլեոնյան ժամանակաշրջանում³⁷, որը կարևորագույն նշանակություն ունեցավ Եվրոպայում ազգերի ինքնորոշման իրավունքի գաղափարաբանական ճանաչման տեսանկյունից³⁸: Ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման միջոցով Ֆրանսիան ձգտում էր միավորել եվրոպական ազգերին իր գերակայության շրջանակներում:

18-րդ դարի վերջին՝ դեռևս Ֆրանսիական մեծ հեղափոխությունից առաջ, ազգերի ինքնորոշման իրավունքի տարածման այլընտրանքային մեկ այլ հնարավորություն նշմարվեց օվկիանոսից անդին՝ Ամերիկյան հեղափոխությամբ, որի արդյունքում առաջացավ Արևմտյան կիսագնդի առաջին ազգ-պետությունը՝ հռչակելով ազատության, իրավահավասարության և ազգերի ինքնորոշման համընդհանրական գաղափարները³⁹: Դրանց արտահանումը, սակայն, պետք է սկսվեր միայն 20-րդ դարի սկզբին, իսկ այդժամ ԱՄՆ-ի հիմնադիր հայրերը կարծում էին, որ միջազգային կարգուկանոնը կախված է հակադիր ազգային շահերի միջև հավասարակշռության պահպանումից և ոչ թե հավաքական անվտանգությունից: Քանզի Եվրոպայում ուժերի հավասարակշռության պահպանումը ամերիկյան անկախության երաշխիքներից էր նաև: Նշանավոր լուսավորական և ԱՄՆ նախագահ Թոմաս Ջեֆերսոնը հաստատական էր անգամ 1812-1814 թթ. անգլո-ամերիկյան պատերազմի ընթացքում. «Մեր շահերին չի կարող համապատասխանել ողջ Եվրոպայի միավորումը միասնական միապետության մեջ, եթե Նապոլեոնը նորից շարժվեր Մոսկվա, ես նորից նրան նույն պարտությունը կցանկանայի, որը կխանգարեր նրան հասնելու Պետերբուրգ: Եթե, անգամ, դրա հետևանքը հանդիսանար մեր պատերազմի ձգձգումը Մեծ Բրիտանիայի դեմ, ես ավելի շուտ կհամաձայնեի դրա հետ, քան որ Եվրոպայի ողջ հզորությունը կենտրոնանա մեկի ձեռքերում»⁴⁰: Ավելի քան մեկ դար Միացյալ

ինչպես մեկ պետության քաղաքացիներ, երկրորդ, նա ով ճնշում է մի ժողովրդի իրեն այդպիսով հայտարարում է թշնամի բոլորին, երրորդ, ժողովրդի դեմ պատերազմողները, ովքեր նպատակ ունեն սահմանափակելու ազատությունը և վերացնելու մարդու իրավունքները, թշնամիներ են բոլորի համար և ենթակա են հետապնդման»: Տե՛ս **Schroeder P. W.**, *The Transformation of European Politics, 1763-1848*. Oxford History of Modern Europe, New York, Oxford: Oxford University Press, 1999, pp. 67-73.

36 **Lentz T.**, *Napoléon Diplomate*. Ouvrage publié sous la direction de Guy Stavridés. Paris: CNRS Éditions, 2012, p. 12.

37 Տե՛ս **Manas J.**, *Napoleon on Project Management: Timeless Lessons In Planning, Execution, and Leadership*. Nashville, Tennessee: Thomas Nelson, Inc., 2006, pp. 44-55.

38 Տե՛ս **Եփրեմյան Տ.**, Նապոլեոն Բոնապարտը և ազգերի ինքնորոշման իրավունքը: Ընդդեմ մեծ տերությունների եվրոպական համերաշխության, «ՎԷՄ», է(ԺԳ) տարի, N 4 (52), ԽՈՒՄԻՆԵՐ-ՂԵՆԿՐԵՆԻՔԻ, 2015, էջ 97-119:

39 Տե՛ս *The Text of the Declaration of Independence*, Philadelphia: July 4, 1776. *A Century of Lawmaking for a New Nation: U.S. Congressional Documents and Debates, 1774 - 1875, Journals of the Continental Congress, Volume 5*, pp. 510-515. Ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման քաղաքականությունը ծագում է Ամերիկայի Միացյալ Նահանգների անխոչընդոտ հռչակագրից (4 ԽՈՒՄԻՆ, 1776 թ.):

40 **Шлезингер А.**, *Циклы Американской Истории*, пер. с англ. - М: «Прогресс-Академия», 1992, с. 81.

Նահանգների արտաքին քաղաքականությունը հետևում էր այս սկզբունքին, իսկ ամերիկյան հասարակական միտքն՝ ավելի երկար:

Գաղափարը կրկին բարձրացվեց 1849 թ. Փարիզի խաղաղության կոնգրեսում⁴¹: Կոնգրեսին մասնակից Իտալական ազգային վերածննդի առաջնորդներից Զուգեպպե Մաձինին պնդում էր, որ եվրոպական քաղաքական համակարգը պետք է վերածնակերպվի ժողովրդավարության և ազգերի ինքնորոշման սկզբունքների հիմքով: Մաձինիի գաղափարները մեծ ազդեցություն ունեցան Եվրոպայի, Լատինական Ամերիկայի, Մերձավոր Արևելքի և Ասիայի ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումների վրա: Մաձինին համոզված էր, որ միայն ազգ-պետությունը կարող է հնարավոր դարձնել քաղաքացիական կրթությունը և իրական ժողովրդավարական մասնակցությունը⁴²: Մաձինիի համար պետական ինքնիշխանության սկզբունքը ստորադաս էր ազգային ինքնիշխանության գաղափարին, իսկ ազգը անհրաժեշտ միջնորդ քայլ էր դեպի մարդկության ընկերակցություն: Ազգը առաջին հերթին քաղաքական միավոր էր իբրև սահմանադրության ներքո հավասարների ժողովրդավարական ընկերակցություն: Մաձինին կարծում էր, որ Եվրոպայի ազգերը մի օր կարող են միանալ և միասին հիմնել «Եվրոպայի Միացյալ Նահանգներ»: Նա պնդում էր, որ ժողովրդավարության և ազգերի ինքնորոշման իրավունքի տարածումը երկարաժամկետ հեռանկարում խաղաղություն կհաստատի, թեպետ և այդ անցումը հաճախ կարող է բռնի լինել: Մաձինիի ազդեցությունն էր կրում նաև ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը, ով հետագայում ազատական ինտերնացիոնալիզմը բարձրացրեց բացահայտ արտաքին քաղաքական դոկտրինի մակարդակի⁴³: Հարկ է նշել, որ Ամերիկյան հեղափոխությունը և անկախությունը համարվում է ազգերի ինքնորոշման իրավունքի «հիմնադիր օրինակ» (seminal example)⁴⁴:

3. Ինքնորոշման գաղափարից ինքնորոշման իրավունք

1919 թ. Ազգերի լիգայի հիմնադրումը առաջին անգամ թույլ տվեց համաշխարհային քաղաքացիական կարգի և ազգերի ինքնորոշման իրավունքի նախագիծը բարձրացնել գործնական քաղաքականության օրակարգ և սկսել միջազգային իրավունքի սահմանադրականացումը⁴⁵: Աշխարհակարգի այս կարևոր զարգացումը կայացավ Առաջին աշխարհամարտի արդյունքում և ուղղորդվեց ԱՄՆ-ի կողմից:

19-րդ և 20-րդ դարերի սահմանագծին ԱՄՆ-ի արտաքին քաղաքական հայեցակարգը որակական լուրջ փոփոխություններ կրեց. կախված ժամանակի պահանջներից և ամերիկյան հնարավորությունների մակարդակից:

41 Stéu **Viegnes M.**, The French Vision of Europe from Victor Hugo's United States of Europe to the No to the Constitution, *Europe's Journal of Psychology* Vol 1, No 4 (2005), p. 1.

42 Stéu **Mazzini G.**, A Cosmopolitanism of Nations: Giuseppe Mazzini's Writings on Democracy, Nation Building, and International Relations (1805-1872). Edited and with an introduction by Stefano Recchia and Nadia Urbinati; translations by Stefano Recchia. Princeton and Oxford: Princeton University Press, 2009, pp. 1-2.

43 Stéu **Mazzini G.**, նշվ. աշխ., էջեր 1-3:

44 Stéu **DeConde Al.** (ed.), *Encyclopedia of American Foreign Policy: Studies of the Principal Movements and Ideas*, 2nd ed., Vol 3 (New York: Gale Group, 2002), pp. 461-462.

45 Stéu **Хабермас Ю.**, Расколотый Запад. с нем. – М.: Изд. “Весь Мир”, 2008 г., с. 146.

կից՝ վերամեկնաբանվեց և զարգացվեց «Մինրոյի դոկտրինը»: Այն է՝ եթե նախկինում նորաստեղծ պետության կայացման համար կարևոր էր ամերիկյան մայրցամաքով սահմանափակվելու իրողությունը, ապա այժմ այն հույժ խոցելի կողմերից էր: Ըստ այդմ՝ ամերիկյան անվտանգությունն այլևս անբաժան էր համարվում մնացյալ մարդկության անվտանգությունից⁴⁶: Դա մասնավորապես արտահայտվեց նախագահ Թոմաս Վուդրո Վիլսոնի (1913–1921 թթ.) հայեցակարգում՝ «ազգերի ինքնորոշման իրավունքի» շեշտադրմամբ, «հավաքական անվտանգության» հղացքով և «ժողովրդավարության արտահանման» քաղաքականությամբ⁴⁷: Այս նոր մոտեցումը դրսևորվեց 1917 թ. ապրիլի 2-ին, երբ նախագահ Վիլսոնը դիմեց ԱՄՆ-ի Կոնգրեսին՝ առաջարկելով պատերազմ հայտարարել Գերմանիային: Ուղերձում ասվում էր. «Չեզոքությունն արդեն անհնարին է և անցանկալի, երբ խոսքն ամբողջ աշխարհի խաղաղության և նրա ժողովուրդների ազատության մասին է... Աշխարհը պետք է անվտանգ դառնա ժողովրդավարության համար, այն պետք է կայանա քաղաքական ազատության հիմքի վրա... Արդարությունն ավելի թանկ է, քան խաղաղությունը, և մենք կայաքարենք... ժողովրդավարության համար, մարդու իրավունքների համար, փոքր ազգերի իրավունքների և ազատության համար...»⁴⁸:

1918 թ. հունվարի 8-ին Կոնգրեսի լիագումար նիստին ուղված իր ուղերձում ԱՄՆ նախագահ Վիլսոնը հանդես եկավ «տասնչորս կետերից» բաղկացած խաղաղության ծրագրով: Այստեղ առանցքային էր 14-րդ կետը՝ Ազգերի լիգայի ստեղծումը. «Ազգերի ընդհանուր ընկերակցություն պետք է ստեղծվի հատուկ ուխտի ներքո մեծ և փոքր պետություններին համահավասար կերպով քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության փոխադարձ երաշխիքների ընձեռնման նպատակով»⁴⁹: Հետևաբար նոր աշխարհակարգի կառուցման համապատկերում ժողովրդավարության անվտանգությունն ապահովելու համար Վիլսոնը առաջադրում էր «հավաքական անվտանգության» հղացքը, որի իրականացմանը պետք է միտված լինե՞ր Ազգերի Լիգայի գործունեությունը⁵⁰: Այս կերպ Վիլսոնը ծանրակշիռ ներդրում արեց միջազգային հարաբերություններում

46 Տե՛ս Kissinger H. A. Diplomacy. New York, London, Toronto, Sydney: Simon & Schuster, 1994, pp. 47–48.

47 Տե՛ս DeConde Al. (ed.), Encyclopedia of American Foreign Policy: Studies of the Principal Movements and Ideas, 2nd ed., Vol 3 (New York: Gale Group, 2002), p. 617.

48 Wilson W. Address of the President of the United States Delivered at a Joint Session of the Two Houses of Congress, April 2, 1917. Washington: Government Printing Office, 1917, pp. 3–8.

49 Wilson W. Address of the President of the United States Delivered at a Joint Session of the Two Houses of Congress, January 8, 1918. Washington: Government Printing Office, 1918, pp. 5–7. Համապատասխանաբար «Վիլսոնի տասնչորս կետերն» էին՝ 1-ին թափանցիկ դիվանագիտությունը, 2-րդ ծովագնացության ազատությունը, 3-րդ տնտեսական արգելքների վերացումը, 4-րդ սպառազինությունների խիստ կրճատումը, 5-րդ գաղութային վեճերի արդար լուծումը, 6-րդ ռուսական տարածքներից զորքերի դուրսբերումը, 7-րդ Բելգիայի ինքնիշխանության վերականգնումը, 8-րդ Էլզաս-Լոթարինգիայի վերադարձը Ֆրանսիային, 9-րդ Իտալիայի սահմանների վերանայումը, 10-րդ Ավստրո-Հունգարիայի ժողովուրդների ինքնավարությունը, 11-րդ Բալկաններից օտարերկրյա զորքերի դուրսբերումը, 12-րդ Օսմանյան կայսրության թուրքական շրջանների ինքնիշխանության երաշխավորումն ու նրանց տիրապետության տակ գտնվող ազգերին ինքնավարության շնորհումը, նաև Նեղուցների միջազգայնացումը, 13-րդ անկախ Լեհաստանի ստեղծումը ելքով դեպի ծով և գլխավորը՝ 14-րդ Ազգերի լիգայի ստեղծումը. այստեղ Վիլսոնը առաջ էր քաշում ազգերի համագործակցության և պետությունների իրավահավասարության գաղափարները:

50 Տե՛ս Богатунова А. Д. (ред.), Системная история международных отношений в двух томах. Т. Первый, События 1918–1945 годов. М.: Культурная история, 2009, с. 36.

«իդեալիզմի» տեսության և պրակտիկայի մեջ: Սույն փաստաթղթի 12-րդ կետն անմիջականորեն վերաբերում էր հայության և Հայաստանի ապագային⁵¹: Այն միանշանակորեն շեշտում էր Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների, մասնավորապես հայության, ազատորեն ապրելու և սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքը⁵²:

Ըստ Իմանուիլ Ուոլթերսթայնի՝ 1917 թվականը արդի աշխարհի համակարգի պատմության մեջ գաղափարաբանական առումով շրջադարձային էր: Այդ շրջադարձը նշանավորեցին մի կողմից՝ Վիլսոնի դոկտրինի հռչակումը և մյուս կողմից՝ բոլշևիկյան հեղափոխությունը: Վիլսոնի դոկտրինը հիմնված էր լիբերալ (ազատական) գաղափարաբանության վրա և հանրնդհանրական բնույթ ուներ: Այստեղ կենտրոնականը ինքնորոշման գաղափարն էր, որը անձի ազատության իրավունքից վերածվեց ազգերի ինքնորոշման իրավունքի: Բոլշևիկները Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ևս հայտարարում էին ազգերի ինքնորոշումը պաշտպանելու մասին: Սակայն ի տարբերություն Վիլսոնի, ով պաշտպանում էր այդ իրավունքի իրականացման սահմանադրական ուղին, Լենինը հանդես էր գալիս հեղափոխության դիրքերից⁵³:

Վուդրո Վիլսոնը գտնում էր, որ կայսրությունները պետք է փլուզվեն և պաշտպանում էր ազգերի ինքնորոշման իրավունքը: Սակայն Վիլսոնի և եվրոպացի գործիչների այս տեսլականը սահմանափակված էր միայն եվրոպական ազգերով, որոնք կազմում էին Ավստրո-Հունգարական, Ռուսական և Օսմանյան կայսրության մաս⁵⁴: Քանզի ըստ նրանց՝ եվրոպական ազգերը գտնվում էին զարգացման համապատասխան մակարդակի վրա, հետևաբար կարող էին պատասխանատվություն վերցնել սեփական ճա-

51 Ինչ վերաբերվում է ձևավորվող նոր աշխարհակարգում Հայկական հարցի լուծմանը, ապա 1919 թ. հունվարի 30-ին նախագահ Վիլսոնի նախաձեռնությամբ Փարիզի վեհաժողովը որոշում էր ընդունել Արևմտյան Հայաստանն ազատագրելու և մանդատատեր նշանակելու մասին: 1920 թ. ապրիլի 26-ին Դաշնակից և ընթերակա ուժերի Գերագույն խորհուրդը, բաղկացած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչներից, դիմեց նախագահ Վիլսոնին Հայաստանի և Թուրքիայի սահմանը որոշելու համար իրականացնել իրավարար վճիռ: 89-րդ հոդվածի տեսքով այս դիմումը ներառվեց նաև Սևրի պայմանագրի (1920 թ. օգոստոսի 10) մեջ և արդեն Հայաստանի ու Թուրքիայի, ինչպես նաև դաշնագիրը ստորագրած գրեթե 20 երկրի անունից հղվեց ԱՄՆ-ի նախագահին: 1920 թ. նոյեմբերի 22-ին Վուդրո Վիլսոնը ստորագրեց «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ» իրավարար վճիռը (Arbitral Award): Այն դեկտեմբերի 6-ին պաշտոնապես փոխանցվեց Փարիզ՝ դաշնակից ուժերի Գերագույն խորհրդին, սակայն չիրագործվեց: Ըստ իրավարար վճռի, Հայաստանի Հանրապետության իրավունքները ճանաչվում էին նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգների վրա՝ ընդհանուր առմամբ 103,599 քառ. կմ: Տե՛ս Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները (հոդվածների ժողովածու): Երրորդ, լրամշակված հրատարակություն, Եր., 2009 թ., էջեր 38-39:

52 Տե՛ս Wilson W. Address of the President of the United States Delivered at a Joint Session of the Two Houses of Congress, January 8, 1918. Washington: Government Printing Office, 1918, pp. 5-7.

53 Տե՛ս Вальерстайн И. Анализ мировых систем и ситуация в современном мире. Пер. с англ. П. М. Кудюкина. Под ред. Б. Ю. Кагарлицкий — СПб.: Издательство «Университетская книга», 2001, с. 151-153. Ազգերը կամ ժողովուրդները, ըստ մարքսիզմի տեսության, երկարաժամկետ դերակատարներ չէին. ներառվում էր, որ նրանք, ինչպես և պետությունները, ի վերջո վերանայու են: Սակայն կարճաժամկետ հեռանկարում ազգերը կամ ժողովուրդները իրողություններ էին, որոնց օգտագործումը մարտավարական առումով ձեռնառու էր:

54 Տե՛ս DeConde Al. (ed.), Encyclopedia of American Foreign Policy: Studies of the Principal Movements and Ideas, 2nd ed., Vol 1 (New York: Gale Group, 2002), p. 55. Տե՛ս նաև Lynch A., Woodrow Wilson and the Principle of 'National Self-Determination': A Reconsideration. Review of International Studies, Vol. 28, No. 2 (Apr., 2002), pp. 419-436.

կատագրի նկատմամբ: Մյուս ժողովուրդների համար նախատեսվում էր Ազգերի լիգայի դաշնադրության (Covenant) 22-րդ հոդվածով սահմանված մանդատային համակարգի կիրառումը (Mandatories on behalf of the League)⁵⁵:

Այսպիսով, թեև ինքնորոշումը որպես գաղափար և սկզբունք ունի երկարատև պատմություն, այնուամենայնիվ ինքնորոշումը՝ որպես միջազգային իրավունք, համեմատաբար նոր ծագում ունի: Եվ, ըստ էության, Ազգերի լիգայի մանդատային համակարգը փոխզիջումային միջանկյալ իրավիճակ էր՝ ազգերի ինքնորոշման համընդհանրական իրավունքի ձևակերպման ճանապարհին⁵⁶:

Պատերազմի արդյունքում փլուզվեցին Գերմանական, Ռուսական, Ավստրո-Հունգարական և Օսմանյան կայսրությունները: Հատկանշական է՝ այս փուլում ազգերի ինքնորոշման իրավունքը հիմնականում ճանաչվում էր եվրոպական ազգերի դեպքում: Ականավոր բրիտանացի պատմագետ Անտոն Թոյնբիին թուրքական կառավարության կողմից իրագործվող Հայոց ցեղասպանության մասին իր աշխատության մեջ պնդում էր, որ հայերը նույնքան եվրոպացի են որքան Արևմտյան Եվրոպայի բնակիչները, և տերությունները պետք է միջամտեն հոգուտ հայերի: Ըստ Թոյնբիի՝ Օսմանյան կայսրության հպատակության տակ մնացած ազգերից հայերը միակն էին, որ ի գործու էին ինքնուրույն կառուցելու «քաղաքակիրթ, արդի պետություն» (civilized, modern state): Թոյնբիին նաև գրում էր. «Անատոլիական (Հայկական – ընդգծումը մերն է՝ Տ. Ե.) բարձրավանդակը ֆիզիոլոգիապես նույնական է և մերձավոր (akin) Եվրոպային, իսկ հայերը, որ բնակվում են այնտեղ, ոչ միայն **եվրոպացիներ են իրենց քաղաքակրթությամբ** (Europeans in their civilization), այլև բնիկ են և գտնվում են իրապես եվրոպական կլիմայական գոտում՝ նույն կլիման, որ գերիշխում է Բալկանյան թերակղզում կամ Ավստրո-Հունգարիայում»⁵⁷:

Արդյունքում Արևելյան Եվրոպայում առաջացան մի շարք նոր ինքնիշխան պետություններ՝ Ֆինլանդիան, Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Լեհաստանը, Չեխոսլովակիան, Ուկրաինան, Վրաստանը, Հայաստանը և այլք:

Վիլսոնը հայտարարում էր, որ այլևս միջազգային հարաբերությունների համակարգը պետք է կառուցվի ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա⁵⁸, որի անվտանգությունը պետք է կախված լինի ոչ թե ուժերի հավասարակշռությունից, այլ՝ ուժերի միավորումից և հավաքական գործողություններից⁵⁹: Հատկանշական է, որ ներգրավվելով Առաջին աշխարհամարտին (1917 թ., ապրիլի 6)՝ ԱՄՆ-ը չմիացավ Անտանտին, այլ իրեն հռչակեց

55 Տե՛ս The Covenant of the League of Nations (Including Amendments adopted to December, 1924). Yale Law School, Lillian Goldman Law Library, The Avalon Project: Documents in Law, History and Diplomacy. URL: http://avalon.law.yale.edu/20th_century/leagcov.asp (08.01.2016).

56 Տե՛ս **Papian A.** On the Principles of Self-Determination and So-Called “Territorial Integrity” In Public International Law (The Case of Nagorno-Karabakh). «21st CENTURY», № 2 (8), 2010, p. 22.

57 **Toynbee A. J.** The Armenian Atrocities: the Murder of a Nation, with a speech delivered by Lord Bryce in the House of Lords. London: Hodder & Stoughton, 1915, pp. 58-59, 70, 102, 116.

58 Տե՛ս **DeConde Al.** (ed.), Encyclopedia of American Foreign Policy: Studies of the Principal Movements and Ideas, 2nd ed., Vol 3 (NewYork: Gale Group, 2002), pp. 464-466. Վիլսոնի համար ինքնորոշումը հավասարազոր էր ժողովրդական ինքնիշխանության գաղափարին, որն արտահայտված է լատիներեն ասացվածով՝ «ժողովրդի ձայնը Աստծու ձայնն է» (vox populi vox dei):

59 Տե՛ս **Шлезингер А.**, նշվ., էջ 82:

սոսկ ասոցիատիվ անդամ: Շնորհիվ դրա ամերիկյան կառավարությունը մի կողմից ընդգծում էր ազգերի հավաքական անվտանգության հղացքը, մյուս կողմից իրավաբանորեն ազատ էր մնում միջդաշնակցային փոխադարձ պարտականություններից⁶⁰: Այս կերպ Միացյալ Նահանգները նաև ցույց էին տալիս, որ մուտք են գործում պատերազմ ոչ թե որպես որևէ դաշինքի անդամ, այլ հանուն հավաքական անվտանգության և ազգերի ազատության:

1919 թ. հունիսի 28-ին կնքվեց Վերսալի պայմանագիրը, որով պաշտոնապես ավարտվեց Առաջին աշխարհամարտը (1914–1918 թթ.)⁶¹: Վերսալի պայմանագրի բաղկացուցիչ մասն էր կազմում Ազգերի Լիգայի ստեղծման կոնվենցիան: Ազգերի լիգայի դաշնադրության 10-րդ հոդվածով ամրագրվում էր «արտաքին ագրեսիայից Լիգայի բոլոր անդամ պետությունների տարածքային ամբողջականության և գոյություն ունեցող քաղաքական անկախության պահպանումը»⁶²: Ավելին, 11-րդ հոդվածը սահմանում էր, որ յուրաքանչյուր պատերազմի կամ պատերազմի սպառնալիքի դեպքում Ազգերի Լիգան պետք է համապատասխան գործողություններ նախաձեռնի «ի պաշտպանություն ազգերի խաղաղության»⁶³:

Այսպիսով, Փարիզյան կարգավորումներն արտահայտում էին փոխհատուցման, հավաքական անվտանգության և ազգերի ինքնորոշման սկզբունքները, սակայն հաշվի չէին առնում «եվրոպական հավասարակշռությունը»: 1919–1922 թթ. ձևավորված Վերսալ-Վաշինգտոնյան աշխարհակարգը, որը պարուրում էր ողջ երկրագունդը և ըստ էության՝ առաջին համաշխարհային աշխարհակարգն էր, գոյատևեց ընդամենը մոտ երկու տասնամյակ:

Երկրորդ աշխարհամարտից (1939–1945 թթ.) հետո ձևավորվեց Յալթա-Պոտսդամյան աշխարհակարգը: Այն երկբևեռ աշխարհակարգ էր, որում երկու գերտերությունները՝ Միացյալ Նահանգները և Խորհրդային Միությունը, գերիշխող դիրքեր էին զբաղեցնում և մրցակցում էին միմյանց հետ⁶⁴: «Սառը պատերազմը» նախ և առաջ հիմնված էր գաղափարաբանական սկզբունքների վրա. և լիբերալիզմը և կոմունիզմը համընդհանրական գաղափարներ լինելով հանդերձ, միաժամանակ՝ «իրարամերժ էին»⁶⁵: Այս երկբևեռ աշխարհակարգի համար բնութագրական էր «սահմանափակ ինքնիշխանությունը». ըստ էության լիարժեք ինքնիշխան էին միայն հակամարտ գերտերությունները: Այս առումով Յալթա-Պոտսդամյան աշխարհակարգը հիմնարար մարտահրավեր էր Վեստֆալյան համակարգին⁶⁶:

Նոր աշխարհակարգում գլխավոր միջազգային հաստատությունը դարձավ Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ): Այն հիմնադրվեց 1945 թ. հոկտեմբերի 24-ին, երբ 51 հիմնադիր անդամ պետություն–

60 Տե՛ս **Боратырова А. Д.** (ред.), նշվ. աշխ., էջ 35:

61 Տե՛ս **Remini R. V.** A Short History of the United States. New York: HarperCollins Publishers Inc., 2008, p. 203.

62 **Article 10.** The Covenant of the League of Nations (Including Amendments adopted to December, 1924).

63 **Article 11.** The Covenant of the League of Nations (Including Amendments adopted to December, 1924).

64 Տե՛ս **Baylis J. and Smith S.** (ed.), The Globalization of World Politics: An Introduction to International Relations, 2nd edition. New York: Oxford University Press, 2001, pp. 74–77.

65 **Kennedy P. M.** The Rise and Fall of the Great Powers: Economic Change and Military Conflict from 1500 to 2000. London, Sydney and Wellington: Unwin Hyman, 1988, pp. 365, 372.

66 Տե՛ս **Karpovich O.** Global Governance: Past, Present and Future. Bloomington: AuthorHouse, 2013, p. 106.

ների մեծ մասն արդեն վավերացրել էին Կանոնադրությունը (Charter): ՄԱԿ-ը փոխարինելու եկավ Ազգերի լիգային և կոչված էր պահպանելու միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, զարգացնելու բարեկամական հարաբերություններ ազգերի միջև, նպաստելու սոցիալական առաջընթացին ու խթանելու մարդու իրավունքների պաշտպանությունը⁶⁷: ՄԱԿ-ը պետք է դառնար «ազգերի գործողությունների համաձայնեցման կենտրոն» այդ ընդհանուր նպատակներն իրագործելու ճանապարհին: Առաջին անգամ միջազգային կարևորագույն փաստաթղթում հիմնարար կերպով ձևակերպվեց ազգերի ինքնորոշման իրավունքը: ՄԱԿ-ի Կանոնադրության առաջին հոդվածի 2-րդ կետը հռչակում է. «Զարգացնել ազգերի բարեկամական հարաբերություններ՝ հիմնված **ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի** (the principle of equal rights and self-determination of peoples) հարգանքի վրա և այլ համապատասխան միջոցներ ձեռնարկել հանուն համընդհանուր խաղաղության ամրապնդման»⁶⁸: Ըստ այդմ ինքնորոշումը համարվում է բարեկամական հարաբերությունների և համընդհանուր խաղաղության հիմքերից մեկը⁶⁹:

Հատկանշական է, որ Կանոնադրության երկրորդ հոդվածի 1-ին կետը բոլոր անդամ պետությունների համար շեշտում էր նաև «ինքնիշխան հավասարության» (sovereign equality) Վեստֆալյան սկզբունքը: Իսկ երկրորդ հոդվածի 4-րդ կետը հռչակում է միմիայն հետևյալը. «Բոլոր անդամները միջազգային հարաբերություններում պետք է ձեռնպահ մնան որևէ պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից կամ Միավորված ազգերի նպատակներին անհամապատասխան որևէ այլ քայլերից»⁷⁰: Միանգամայն ակնհայտ է, որ այս հիմնադրույթը չի բացարձակացնում «տարածքային ամբողջականության» կամ պետության տարածքի անձեռնմխելիության սկզբունքը: Այն պարզապես մերժում է արտաքին ագրեսիան կամ ռազմական ներխուժումը և հանդիսանում է «ուժի գործադրման արգելք»՝ կոչ անելով ձեռնպահ մնալ ուժի գործադրման միջոցով մեկ այլ պետություն կամ այլ պետությանը պատկանող տարածք նվաճելուց կամ նրա կառավարությունը տապալելուց⁷¹:

Այսպիսով, ստեղծելով գաղութային կայսրություններ և նվաճելով մնացյալ աշխարհի մեծագույն մասը՝ եվրոպական ազգ-պետությունները աշխարհի տարբեր մասեր էին արտահանում նաև պետականության իրենց հղացքը: Եվ այդ հղացքն էլ գործեց իրենց դեմ, երբ գաղութացված երկրները պահանջեցին ինքնիշխանություն: Այս կերպ առաջ եկավ ազգերի ինքնորոշման իրավունքը, որը ամրապնդվեց Միավորված ազգերի կազմա-

67 Տե՛ս Baylis J. and Smith S. (ed.), նշվ. աշխ., էջ 332-335:

68 **Chapter I.** Purposes and Principles, Article 1(2) – Charter of the United Nations and Statute of the International Court of Justice. San Francisco, 1945, pp. 2-3.

69 ՄԱԿ-ի կանոնադրության 24-րդ հոդվածի 2-րդ կետը ամրագրում է, որ «Անվտանգության խորհուրդը պետք է գործի Միավորված ազգերի նպատակներին և սկզբունքներին համահունչ»: Տե՛ս **Chapter V.** The Security Council, Functions and Powers, Article 24(2) – Charter of the United Nations and Statute of the International Court of Justice. San Francisco, 1945, p. 7.

70 **Chapter I.** Purposes and Principles, Article 2(1) – Charter of the United Nations and Statute of the International Court of Justice. San Francisco, 1945, p. 3.

71 Տե՛ս **Papian A.**, նշվ. աշխ., էջ 21:

կերպության կանոնադրությամբ⁷²:

Ազգերի ինքնորոշման իրավունքը, որպես կանոն, մեկնաբանվում է իբրև ազգերի կողմից սեփական պետությունների ձևավորման իրավունք. պետությունները պետք է լինեն ազգ-պետություններ, և ազգերը պետք է դառնան պետություններ⁷³: Սակայն իր տարբերություն եվրոպական պետությունների, որոնց սահմանները ձևավորվել և ամրապնդվել էին պատմական զարգացման արդյունքում, գաղութացված երկրների սահմանները սահմանված էին գաղութային իշխանությունների կամայականությամբ: Այդպիսի սահմանները հաճախ մեկ պետության մեջ էին միավորում հակամարտ էթնիկ կամ կրոնական խմբերի, կամ այդ սահմաններից դուրս էին թողնում տվյալ էթնիկ խմբի մի հատվածին⁷⁴:

Եվրոպայում աշխարհակարգի հիմնարար սկզբունքների վերանայման կամ վերահաստատման հաջորդ կարևոր գործընթացը սկսվեց 1973 թ. իբրև «Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդածոլով» (ԵԱՀԽ): Երկու տարվա խորհրդակցություններից հետո 1975 թ. հուլիսին ԵԱՀԽ-ն Հելսինկիում արձանագրեց եզրափակիչ արդյունքները: Այն նպատակաուղղված էր թուլացնելու «սառը պատերազմի» լարվածությունը և մերձեցնելու կողմերին ընդհանուր արժեքների շուրջ: 1975 թ. օգոստոսի 1-ին ստորագրվեց Հելսինկիի եզրափակիչ ակտը (Helsinki Final Act)⁷⁵: Այս կերպ ԵԱՀԽ մասնակից պետությունները հռչակագիր ընդունեցին իրենց միջև հարաբերությունները ղեկավարող սկզբունքների մասին⁷⁶:

Հելսինկյան եզրափակիչ ակտի հիմնարար սկզբունքներն են՝ 1-ին ինքնիշխան հավասարություն, ինքնիշխանությանը հատուկ իրավունքների հարգում, 2-րդ ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելը, 3-րդ սահմանների անխախտելիություն, **4-րդ պետությունների տարածքային ամբողջականություն**, 5-րդ վեճերի խաղաղ կարգավորում, 6-րդ ներքին գործերին չմիջամտելը, 7-րդ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգում՝ ներառյալ մտքի, խղճի, կրոնի կամ դավանանքի ազատությունը, **8-րդ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքներ**, 9-րդ պետությունների համագործակցություն, 10-րդ միջազգա-

72 Տե՛ս **Цыганков П. А.** (Рук. авт. колл.), *Международные отношения: социологические подходы* // М.: Гардарика, 1998, с. 197.

73 Տե՛ս **Bull H., Kingsbury B., Roberts A.** (eds), *Hugo Grotius and International Relations*. Oxford: Oxford University Press, 1992, pp. 86-87.

74 Տե՛ս **Цыганков П. А.** (Рук. авт. колл.), նշվ. աշխ., էջ 198:

75 Ակտի ստորագրմամբ մեկնարկեց դրանում ամրագրված սկզբունքների և հանձնառությունների խթանման գործընթացը՝ «Հելսինկյան գործընթացը»: ԵԱՀԽ-ն հաստատութենականացվեց ու վերածվեց գործուն համավերլուծական կազմակերպության: Հայաստանը միացավ ԵԱՀԽ-ին 1992 թ.՝ անմիջապես իր անկախության հռչակումից հետո: 1994 թ. դեկտեմբերի Բոդայպեշտի զագաթնաժողովում, հիմքում ունենալով անվտանգության ընդգրկուն հայեցակարգ, ԵԱՀԽ-ն անվանափոխվեց ԵԱՀԿ-ի՝ «Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության» (*Organization for Security and Co-operation in Europe (OSCE)*): 1975 թ. ԵԱՀԽ մասնակից պետությունները 35-ն էին՝ ԱՄՆ-ը, Կանադան, բոլոր եվրոպական պետությունները բացի Ալբանիայից: Այժմ ԵԱՀԿ մասնակից պետությունները 57-ն են՝ ընդգրկելով գրեթե ողջ Հյուսիսային կիսագունդը՝ Վանկուվերից մինչև Վլադիվոստոկ: Տե՛ս *Organization for Security and Co-operation in Europe (OSCE): History*. Official website, URL: <http://www.osce.org/history> (10.07.2016).

76 Տե՛ս Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդածոլով. Եզրափակիչ ակտ, Հելսինկի 1975: Հայերեն թարգմանության նույնականությունը հաստատվել է ՀՀ արտգործնախարարության կողմից: Երևան: ՀՀ ԱԳՆ, 2005, էջեր 4-10:

յին իրավունքով ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարում⁷⁷:

Այսպիսով, ազգերի ինքնորոշման սկզբունքը, ձևավորվելով իբրև իմաստասիրական հղացք և ապա վերափոխվելով քաղաքական հայեցակարգի, 20-րդ դարում վերաճեց միջազգային հիմնարար իրավունքի: Աստիճանաբար զարգանալով՝ ազգերի ինքնորոշման իրավունքը վեր է ածվել մարդու իրավունքների հարցի, որը վերաբերում է որոշակի խմբի, այլ ոչ թե անհատների⁷⁸: Տարածքային ամբողջականության պահպանման հայեցակարգը՝ իբրև միջազգային իրավունքի նորմ, ի հայտ է եկել Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Ինչպես վերը քննարկեցինք, տարածքային ամբողջականության պահպանությանն էին վերաբերվում Ազգերի լիգայի դաշնադրության 10-րդ հոդվածը, ՄԱԿ-ի կանոնադրության երկրորդ հոդվածի 4-րդ կետն ու Հելսինկիի եզրափակիչ ակտի 3-րդ և 4-րդ կետերը: Միանգամայն պարզ է, որ բոլոր այս միջազգային հիմնարար փաստաթղթերը դատապարտում են միայն միջամտությունը, ներխուժումը, արտաքին ագրեսիան, արտաքին ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումը պետության տարածքային ամբողջականության դեմ և երբեք չեն բացարձակացրել պետությունների տարածքային ամբողջականությունը⁷⁹: Այլոքեն ասած՝ տարածքային ամբողջականությունն իբրև հիմնարար սկզբունք ձևակերպվել է արտաքին ագրեսիայից պետությունների ապահովագրման համար և չի հակասում ազգերի ինքնորոշման իրավունքին ու չի սահմանապակում այն:

4. Արցախի Հանրապետության ինքնորոշման իրավունքը

«Ժողովուրդների ինքնորոշում» և «պետությունների տարածքային ամբողջականություն» հղացքները հաճախ են գործածվում Ղարաբաղյան (Արցախյան) հակամարտության կապակցությամբ: Արցախի ինքնորոշման ներկա գործընթացը սկսվել է 1988 թ. փետրվարի 20-ին, երբ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի պատգամավորների խորհուրդը որոշում կայացրեց դիմելու Խորհրդային Միության, Ադրբեյջանի և Հայաստանի գերագույն խորհուրդներին՝ Ադրբեյջանի կազմից դուրս գալու և Հայաստանի կազմ տեղափոխվելու համար: Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման հիմնարար իրավունքն ամրապնդվեց 1990 թ. ապրիլի 3-ի «Խորհրդային Միությունից Միութենական Հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքով: Ըստ որի՝ ԽՍՀՄ կազմից

77 Տե՛ս նույն տեղում, էջեր 11-16:

78 Տե՛ս **Papian A.**, նշվ. աշխ., էջեր 25-26: Մարդու իրավունքների և միջազգային խաղաղության հարցերով զբաղվող կազմակերպությունները ճանաչում են, որ ինքնորոշման նկատմամբ հարգանքը համաշխարհային խաղաղության նախապայմաններից է: Քանզի մարդու հիմնարար իրավունքներն իմաստ ունեն այն դեպքում, երբ ժողովուրդը վայելում է ինքնորոշման պտուղները:

79 Տե՛ս **Papian A.**, նշվ. աշխ., էջեր 32-33: Տե՛ս նաև **Պասյան Ա.**, Հայրենասիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու) , Եր., «Մոդուս վիվենդի» կենտրոն, 2012, էջ 51-60: Ինչպես արդարացիորեն նշում է Ա. Պասյանը, «Արցախի քաղաքական կյանքում շարունակաբար սխալ փորձեր են արվում «տարածքային ամբողջականությունը» ներկայացնել որպես ինքնորոշման իրավունքի ընդհանուր սահմանափակում: Նման սահմանափակման հիմքը միանգամայն կեղծ է»: Ընդհակառակը Հելսինկիի եզրափակիչ ակտն ընդգծում է, որ «սահմանները կարող են փոփոխվել, համաձայն միջազգային իրավունքի, խաղաղ միջոցներով և համաձայնությամբ»:

միութենական հանրապետության դուրս գալու պարագայում ինքնավար միավորները և համահավաք բնակվող էթնիկ խմբերն իրավունք ստացան դուրս գալու տվյալ հանրապետության կազմից և ինքնուրույն որոշելու իրենց հետագա կարգավիճակը⁸⁰: Ըստ այդմ՝ 1991 թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանի անկախության հռչակագրի ընդունումից հետո Լեռնային Ղարաբաղը միջազգային իրավունքով և ԽՍՀՄ օրենսդրությամբ իրեն ընձեռնված իրավունքով սկսեց համանման գործընթաց՝ ընդունելով իր անկախության հռչակագիրը: Հռչակագիրն ամրապնդվեց 1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով, որի արդյունքում միջազգային դիտորդների ներկայությամբ բնակչության ճնշող մեծամասնությունը կողմ քվեարկեց անկախությանը⁸¹: Այս կերպ ԽՍՀՄ կազմալուծումից հետո նախկին Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տարածքում ստեղծվեցին երկու պետություններ՝ Ադրբեջանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի ինքնորոշումը «տարբերվում է նախկին Խորհրդային Միության տարածքում ծագած այլ հակամարտություններից նրանով, որ Ղարաբաղի ժողովուրդը իրավաբանորեն անթերի կերպով իրացրել է իր ինքնորոշման իրավունքը մինչև Խորհրդային Միության փլուզումը»⁸²: Ի հավելումն՝ Լեռնային Ղարաբաղը երբեք չի եղել անկախ Ադրբեջանի կազմում: Հանգամանք, որն ի չիք է դարձնում նաև տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության սկզբունքներին ապավինելու հիմնավորումները:

ԼՂՀ-ն պաշտպանեց իր ինքնորոշման իրավունքը Ադրբեջանի կողմից նախաձեռնված պատերազմում և 1994 թ. մայիսի 5-ին Ադրբեջանի հետ կնքեց Բիշքեկյան արձանագրությունը: Այստեղ ԼՂՀ-ն ճանաչվեց իբրև բանակցող կողմ: Ի լրումն 1994 թ. մայիսի 5-ի արձանագրության՝ մայիսի 12-ի հրադադարի համաձայնագրով Լեռնային Ղարաբաղը ըստ էության ստացավ «պատերազմող կողմի» (belligerency) կարգավիճակ: Հետևաբար, համաձայն միջազգային իրավունքի՝ սրանից «բխում է ամբողջական ճանաչման պարտավորություն և ճանաչման մերժումը հավասարազոր է քաղաքական ինքնորոշման մերժման, ինչն անօրինական է»⁸³: Սակայն 1990-ական թվականների վերջին ԼՂՀ-ն դուրս մնաց բանակցային գործընթացից:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ բանակցություններն ընթանում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի միջնորդությամբ, այսպես կոչված, «Մադրիդյան սկզբունքներ»-ի հիման վրա, որոնք ձևակերպվեցին 2007 թ. նոյեմբերին Մադրիդում կայացած ԵԱՀԿ Նախարարների խորհրդի նիստի ընթացքում, երբ համանախագահները ներկայացրին Ղարաբաղյան

80 Տե՛ս **Kotcharian Ch.** Perceptions arméniennes: Pourquoi le conflit du Haut-Karabagh n'est toujours pas réglé? Prévention des crises et promotion de la paix (volume III), Ed. Jean-Pierre Vettovaglia. Déterminants des conflits et nouvelles formes de prévention, Bruylant, septembre 2013, pp. 569-593.

81 Տե՛ս **De Waal T.** Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War. New York and London: New York University Press, 2003, pp. 237-240.

82 Տե՛ս **Kotcharian Ch.** նշվ. աշխ., էջեր 569-573:

83 Տե՛ս **Papian A.** նշվ. աշխ., էջեր 35-36:

հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքները: Մադրիդյան փաստաթղթի հիմնական սկզբունքներն են ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառումը, ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և տարածքային ամբողջականությունը: Սակայն Ադրբեջանի ղեկավարության փոխզիջումային լուծումից հրաժարվելը և ապակառուցողական քայլերը Ադրբեջանը դարձրել են Հարավային Կովկասում անվտանգության և կայունության լրջագույն սպառնալիք, որը ձգտում է խափանել խաղաղության հաստատմանն ուղղված բանակցությունները⁸⁴:

ԼՂՀ ինքնորոշման ձանաչման նոր հեռանկար բացվեց Կոստվոյի անկախության ձանաչմամբ՝ իբրև հակամարտությունների լուծման իրավական նախադեպի: 2008 թ. փետրվարի 17-ին Կոստվոյի անկախության միակողմանի հռչակմանն անմիջապես հետևեց ձանաչման գործընթացը Միացյալ Նահանգների և Եվրոպական Միության մի շարք պետությունների կողմից: Սակայն իբրև նախադեպ այլ հակամարտությունների դեպքում այն կիրառելու քննարկումները փոխադրվեցին զուտ քաղաքական շահերի հարթություն և Կոստվոյի անկախությունը ձանաչած պետությունները սկսեցին մեկնաբանել, որ դա առանձնահատուկ լուծում էր եզակի դեպքի համար, իբր՝ Կոստվոյի դեպքը եզակի է, և այն որպես նախադեպ այլ կիրառում չի ունենա: Շուտով այս հարցի կապակցությամբ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 2008 թ. հոկտեմբերի 8-ին ընդունեց 63/3 բանաձևը, որով Արդարադատության միջազգային դատարանը պետք է խորհրդատվական կարծիք տար, թե «արդյո՞ք Կոստվոյի անկախության միակողմանի հռչակումը չի հակասում միջազգային իրավունքի նորմերին»: Հատկանշական է, որ բանաձևի ընդունմանը կողմ քվեարկեցին հիմնականում Կոստվոյի անկախության ձանաչմանը դեմ պետությունները, այդ թվում նաև Ադրբեջանը⁸⁵:

2010 թ. հուլիսի 22-ին Արդարադատության միջազգային դատարանը ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա Կոստվոյի անկախության վերաբերյալ կայացրեց եզրակացություն՝ հաստատելով դրա իրավաչափությունը և որ միակողմանի անկախության հռչակումը միջազգային իրավունքում որևէ կերպ արգելված չէ, իսկ տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է միայն միջպետական հարաբերություններին⁸⁶: Կոստվոյի ինքնորոշման իրավունքի կապակցությամբ այս խորհրդատվական կարծիքը ևս առաջատար տերությունների կողմից քաղաքական նպատակներով մեկնաբանվեց իբրև եզակի դեպք⁸⁷:

Վերլուծության համար հիմք ընդունելով միջազգային իրավունքը՝ 20-21-րդ դարերում աշխարհում ձանաչված տասնյակ նոր պետությունների բազմազանությունը և նախորդ ենթակետում քննարկված միջազգային հիմնարար փաստաթղթերը, այդ թվում՝ ՄԱԿ-ի կանոնադրությունը և Հելսինկիի եզրափակիչ ակտն ու դրանց պաշտոնական մեկնաբանությունները,

84 Տե՛ս **Nalbandian E.** Nagorno-Karabakh: Is A Solution Visible? *Politique Internationale*, N-146, winter 2014-2015, RA MFA, URL: http://www.mfa.am/u_files/file/politic/Edward%20Nalbandian's%20article%20in%20the%20Politique%20Internationale%20magazine.pdf (10.01.2015), pp. 1-11.

85 Տե՛ս **Թորոսյան Ս. Ս.** Կոստվոյի կարգավիճակի որոշման գործընթացի նշանակությունը հակամարտությունների կարգավորման սկզբունքների համատեքստում. Լրաբեր Հասարակական Գիտությունների, N 3, 2010, էջ 50-51:

86 Տե՛ս **Kotcharian Ch.**, նշվ. աշխ., էջ 569-590:

87 Տե՛ս **Թորոսյան Ս. Ս.**, նշվ. աշխ., էջ 40:

կարող ենք պնդել, որ ինքնորոշման իրավունքի ճանաչման ակտերը այդ դեպքերի բացառիկությամբ հիմնավորելը զուրկ է իրավական հենքից և կարող է արտահայտել միայն քաղաքական շահեր: Ըստ այդմ՝ աշխարհաքաղաքական նպատակահարմարությունից ելնելով՝ առաջատար տերությունները երբեմն թելադրում են երկակի ստանդարտներ: Այս կերպ ճանաչվեց Կոսովոյի ինքնորոշումը, իսկ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) ժողովրդի փաստացի ինքնորոշման ճանաչումը դեռևս մնում է առկախված:

Ընդ որում երկակի ստանդարտների կիրառումը Եվրոպայում չի սահմանափակվում միայն ԱՄՆ-ի և ԵՄ երկրների կողմից Կոսովոյի անկախության ճանաչմամբ և ԼՂՀ փաստացի ինքնորոշման անտեսմամբ: Այստեղ մենք կարող ենք նշել նաև Ռուսաստանի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության ճանաչման ակտերը 2008 թ. վրաց-օսական (կամ վրաց-ռուսական) պատերազմի համատեքստում, որի արդյունքում այդ միավորները դարձան մասնակի ճանաչված պետություններ: Մինչդեռ Ադրբեյջանի նախաձեռնած 2016 թ. ապրիլյան «քառօրյա պատերազմ» ընդեմ Լեռնային Ղարաբաղի նույնիսկ պատշաճ և հասցեական գնահատականի չարժանացավ: Ավելին այդ ամենին նախորդել էր Ռուսաստանի կողմից մեծաքանակ հարձակողական սպառազինությունների մատակարարումը պատերազմի պատրաստվող Ադրբեյջանին⁸⁸: Այն դեպքում, երբ մինչ այդ՝ 2014 թ. մարտի 27-ին, Հայաստանը դեմ էր քվեարկել Ուկրաինայի տարածքային ամբողջականության վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 68/262 բանաձևին՝ այդ կերպ ճանաչելով Ղրիմի ինքնորոշումը և միացումը Ռուսաստանին⁸⁹:

Ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման և ճանաչման վերջին ցայտուն նախադեպ կարելի է համարել նաև 2014 թ. սեպտեմբերի 18-ի Շոտլանդիայի անկախության հանրաքվեն և ժողովրդավարական հանրաքվեով անկախության մերժումը⁹⁰:

Այսպիսով, համաձայն գործող միջազգային իրավունքի և նորմերի՝ միջազգային հանրությունը գտնվում է իրավական և բարոյական պարտավորության ներքո՝ ճանաչելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի քաղաքական ինքնորոշումը: Բացի այդ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը անկախության տարիների ընթացքում կայացել է որպես փաստացի (de facto) պետություն⁹¹: Ավելին, 2003 թվականից սկսած «Ֆրիդոմ Հաուս» (Freedom House) միջազգային հեղինակավոր կազմակերպության կողմից ժողովրդավարության, քաղաքացիական իրավունքների և ազատություն-

88 Yepremyan T., Mkrtchyan N., “On Reasons behind Armenia’s Integration Choice: EU vis-à-vis Russia-Led EEU” in EU Relations with Eastern Partnership: Strategy, Opportunities and Challenges. Chisinau-Chernivtsi-Tbilisi, 2016, pp. 174-195.

89 Backing Ukraine’s territorial integrity, UN Assembly declares Crimea referendum invalid. UN official website, URL: <http://www.un.org/apps/news/story.asp?NewsID=47443&Cr=ukraine&Cr1=#.WCIMUKE2vIV> (11.08.2016).

90 SCOTLAND VOTES NO: Scotland has voted against becoming an independent country by 55% to 45%. BBC News, URL: <http://www.bbc.com/news/events/scotland-decides/results> (11.08.2016).

91 Տե՛ս Kolstø P., Blakkisrud H., *De facto States and Democracy*: The case of Nagorno-Karabakh. Communist and Post-Communist Studies, Volume 45, Issues 1-2, March-June 2012, pp. 141-151. Տե՛ս նաև Հարությունյան Բ., Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն: «ՎԷՄ» համահայկական հանդես, Բ (Ը) տարի, N 4 (32), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2010, էջ 24-57:

ների բնագավառում ԼՂՀ-ն մշտապես ճանաչվել է առաջատար Ադրբեյջանից, նաև՝ տարածաշրջանի այլ պետություններից⁹²:

Ուստի կարող ենք արձանագրել, որ Ադրբեյջանի հետ իր ստորագրած 1994 թ. Բիշքեքյան արձանագրությունից ի վեր ԼՂՀ-ն կայացել է իբրև հաջողակ փաստացի պետություն իր հանրային հաստատություններով, տնտեսությամբ, բանակով, արտաքին մշտական ներկայացուցչություններով և այլն⁹³: ՀՀ և ԼՂՀ բարձրագույն ղեկավարությունն իրենց խոսույթում սկսել են շարունակաբար շեշտել Լեռնային Ղարաբաղի պատկանելությունը եվրոպական հանրությանը և եվրոպական քաղաքակրթությանը՝ իբրև ինքնորոշման իրավունքի ճանաչման լրացուցիչ պատրավորեցնող հանգամանք: Մասնավորապես, 2013 թ. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում հայտարարեց. «Ղարաբաղը եղել է, կա և կմնա Եվրոպայի մաս: Ղարաբաղի այսօրվա հանրությունը եվրոպական հանրության՝ եվրոպական ընտանիքի մասնիկ է՝ անկախ իր պետության քաղաքական կարգավիճակից: Ուստի մենք կարծում ենք, որ Եվրոպայի Խորհուրդը կարող է, կարգավիճակից անկախ, ուղղակիորեն շփումներ նախաձեռնել Ղարաբաղի հետ՝ իր իսկ գործառնությունների շրջանակներում...»⁹⁴:

Հատկանշական է նաև ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի մոտեցումը՝ 2016 թ. օգոստոսին ֆրանսիական «Խորհրդարանի թերթ» (Journal du Parlement) և «Եվրոպայի կոմիտե» (Comité de l'Europe) թերթերին տված հարցազրույցում. «Մեզ հաճախակի են հղում նման հարց, որը, ըստ էության, արտացոլում է նաև **Եվրոպա-Արցախ հարաբերությունների տեսլականը: Այն, որ մենք պատկանում ենք մի ընդհանուր քաղաքակրթության, կարծում եմ, անվիճելի փաստ է: Ոմանք նույնիսկ հայտարարում են, որ Եվրոպան վերջանում է Արցախում: Մենք գտնում ենք, որ Եվրոպան սկսում է Արցախից**»⁹⁵:

92 Տե՛ս Freedom in the World 2015: Nagorno-Karabakh. Freedom House, URL: <https://freedomhouse.org/report/freedom-world/2015/nagorno-karabakh> (10.01.2015).

93 Տե՛ս **Yepremyan T.** Nagorno-Karabakh in the Eastern European Security Complex, New Eastern Europe Magazine: Articles and Commentary, Published on Wednesday, 06 April 2016 09:16, <http://neweasterneurope.eu/articles-and-commentary/1944-nagorno-karabakh-in-the-eastern-european-security-complex> (accessed 22 September 2016).

94 ՀՀ Նախագահի ելույթները և ուղերձները. Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում - 02.10.2013, URL: <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/10/02/President-Serzh-Sargsyan-participated-at-the-session-of-the-PACE-speech/>.

95 L'Azerbaïdjan doit trouver la force de renoncer aux stéréotypes raciaux envers les peuples karabaghiotes et arméniens: S.E.M. Bako Sahakian Président de la République du Haut-Karabagh. Le Journal du Parlement, URL: <http://www.lejournalduparlement.fr/site/fr/node/299> (22.09.2016). **Բակո Սահակյան.** Արցախի Հանրապետությունը վաստակել է միջազգային հանրության և քաղաքակրթության աշխարհի կողմից ճանաչվելու իրավունքը: 16-ը օգոստոսի, 2016: <https://armenpress.am/arm/news/857210/arkakh-hanrapetutyuny-vastakel-e-qaxaqakirt-ashkharhi-koxmic.html>.

Ամփոփում

Վեստֆալյան խաղաղությամբ **կրոնական համայնքների ինքնորոշման իրավունքի** և Նիդերլանդների ու Շվեյցարիայի օրինակներով՝ **քաղաքական համայնքների ինքնորոշման իրավունքների** ճանաչման ակտերը հիմնարար նշանակություն ունեցան քաղաքական ինքնորոշման գաղափարի զարգացման տեսանկյունից: Վեստֆալյան խաղաղությամբ հաստատված եվրոպական համակարգը նորոգվեց 1713 թ. Ուտրեխտյան պայմանագրերով, ուր, մեր կարծիքով, եվրոպական հավասարակշռության հիմնական գաղափարը **պետությունների ինքնորոշման իրավունքն** էր: Քանզի վտանգի տակ էր Վեստֆալյան խաղաղությամբ հաստատված իրավահավասար և ինքնիշխան պետությունների օրինական համակարգը: Այդուհանդերձ, մինչև Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակաշրջանը միջազգային հարաբերություններում ինքնիշխանության լեգիտիմության սկզբունքը գրեթե բացառապես դինաստիական էր, որով որոշվում էին միջազգային հանրությանը անդամակցության, ինքնիշխանության իրավունքի կամ դրա փոխանցման հարցերը: Ֆրանսիական և Ամերիկյան հեղափոխություններից հետո միջազգային լեգիտիմության սկզբունքը աստիճանաբար սկսեց ազգային երանգ ստանալ, ինչը ճանապարհի հարթեց հանրաքվեների միջոցով ազգերի կամարտահայտման և ազգերի ինքնորոշման իրավունքների համար:

Թեպետ ազգերի ինքնորոշումը որպես գաղափար և սկզբունք ունի երկարատև պատմություն, որպես միջազգային իրավունք այն համեմատաբար նոր ծագում ունի: Միջազգային կարևորագույն փաստաթուղթը, որում առաջին անգամ իրավական ձևակերպում ստացավ **ազգերի ինքնորոշման իրավունքը** ՄԱԿ-ի Կանոնադրությունն էր: Այսպիսով, ազգերի ինքնորոշման սկզբունքը, ձևավորվելով իբրև իմաստասիրական հղացք և ապա վերափոխվելով քաղաքական հայեցակարգի, 20-րդ դարում վերաճեց միջազգային հիմնարար իրավունքի: Իսկ տարածքային ամբողջականությունն իբրև հիմնարար սկզբունք ձևակերպվել է արտաքին ագրեսիայից պետությունների ապահովագրման համար և չի հակասում կամ սահմանապակում ազգերի ինքնորոշման իրավունքին: Ըստ այդմ՝ միջազգային հանրությունը գտնվում է իրավական պարտավորության և գաղափարական ու բարոյական պատասխանատվության ներքո՝ ճանաչելու Լեռնային Ղարաբաղի (Արցախի) ժողովրդի ինքնորոշման իրավունքը և ԼՂՀ փաստացի (de facto) պետությունը:

Տիգրան Ռ. Եփրեմյան – գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է միջազգային համակարգերի պատմությունը, Հուգո Գրոտիուսի քաղաքական իմաստասիրությունը, Վեստֆալյան աշխարհակարգը, Եվրասիական աշխարհաքաղաքականությունը, Եվրոպայի միասնականացումը, «նոր միջնադարի» տեսությունը, հայկական Սփյուռքը, միջազգային հարաբերությունների կոնստրուկտիվիստական տեսությունները («անգլիական դպրոց», նեոգրամշխականություն, քաղաքակրթությունների բախում):

HISTORICAL TRAJECTORY OF THE RIGHT OF NATIONS TO SELF-DETERMINATION

From the Peace of Westphalia to Nagorno–Karabakh Problem

Tigran R. Yepremyan

Key words – Self-determination of nations, territorial integrity, sovereignty, Hugo Grotius, Peace of Westphalia, Peace of Utrecht, French Revolution, League of Nations, United Nations, Helsinki Final Act, Europe, Artsakh.

The paper aims to present the historical trace and the development of the idea of national sovereignty and the right of nations to self-determination from the Peace of Westphalia (1648) to Helsinki Final Act (1975). It tends to evaluate Grotius' place in the context of the European enlightenment and the history of the formulation of the right of nations to self-determination. According to these approaches nations are constructed with common beliefs and organizational structures. Therefore, nations, i.e. the organized political communities, have the right to political self-determination. The Peace of Westphalia symbolized the transformation of the European-world order based on the hierarchical structures of medieval Christendom to the horizontal system of sovereign territorial states. The rising sense of national individualism was promoted by the Renaissance and Reformation. Meanwhile, the start of the secularization and its adjacent idea of self-determination entailed the principle of peaceful coexistence among legally equal members of international society, which found its fundamental expression in the Helsinki Final Act. Thus, socio-philosophical as well as geo-strategic incentives of the European nation building process are taken into consideration. In the time of the French Revolution new patterns of loyalty and national cohesion were created and new paradigms of identity formation emerged.

The paper offers a new interpretation of the historical trace and the logic of development of the idea of political self-determination and a comparative analysis of its enforcement history. Then, in the aforementioned context, it analyzes the case of self-determination of the Nagorno–Karabakh Republic (Republic of Artsakh), a successful European de facto state in the Eastern-most Europe. Therefore, one of the highly articulated features in the discourse of the Armenian leadership about Nagorno–Karabakh's belonging to the European family and to the European international community is the notion that "Europe starts in Nagorno Karabakh."

ИСТОРИЧЕСКИЙ ПУТЬ ПРАВА НАЦИЙ НА САМООПРЕДЕЛЕНИЕ

От Вестфальского мира до Арцахского вопроса

Тигран Р. Епремян

Ключевые слова – Самоопределение наций, территориальная целостность, суверенитет, Гуго Гроций, Вестфальский мир, Утрехтский мир, Французская революция, Лига Наций, ООН, Хельсинкский заключительный акт, Европа, Арцах.

Статья призвана представить исторический след и развитие идеи национального суверенитета и права наций на самоопределение от Вестфальского мира (1648) до Хельсинкского заключительного акта (1975) и Арцахского (Карабахского) вопроса. Оно стремится оценить место Гуго Гроция в контексте европейского просвещения и в истории формулирования права наций на самоопределение. В соответствии с этими подходами страны конструируются с общими убеждениями и организационными структурами. Таким образом, нации, т.е. организованные политические общины, имеют право на политическое самоопределение. Вестфальский мир символизировал трансформацию европейского порядка с иерархических структур средневекового христианского мира к горизонтальной системе суверенных территориальных государств. Возрождение и Реформация способствовали возникновению чувства национального индивидуализма. В то же время, начало секуляризации и прилегающей к нему идеи самоопределения повлекло за собой принцип мирного сосуществования между юридически равноправными членами международного сообщества, что нашло свое фундаментальное выражение в Хельсинкском Заключительном акте. Таким образом принимаются во внимание социально-философские, а также геостратегические стимулы процесса европейского национального строительства. Во времена Французской революции был создан новый модель лояльности и национального единства и возникла новая парадигма формирования идентичности.

В статье предлагается новая интерпретация исторического следа и логики развития идеи политического самоопределения и сравнительный анализ истории его правоприменения. Затем, в вышеупомянутом контексте, анализируется случай самоопределения Нагорно-Карабахской Республики (Республика Арцах), которое состоялось как успешное европейское де-факто государство в самой восточной Европе. Таким образом, одной из весьма высоко сформулированных характеристик в дискурсе армянского руководства о принадлежности Карабаха к европейской семье и к европейскому международному сообществу, является представление о том, что “Европа начинается в Нагорном Карабахе”.